



ԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմավորման և գործունեության կարգը, նպատակը, խնդիրները, գործառույթները, խորհրդի կարգավիճակը, խորհրդի անդամների լիազորությունների կատեգորիան և դադարեցման հիմքերը:

2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ սույն կարգով:

3. Խորհուրդը գործում է օրինականության, արդարության, անկողմնակալության, հրապարակայնության, քաղաքական զսպվածության, խտրականության բոլոր դրսևորումների բացառման սկզբունքների հիման վրա:

4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով որպես խորհրդատվական մարմին՝ սույն կարգով սահմանված գործառույթների ծավալով և Պաշտպանի սահմանած ժամկետով:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

5. Խորհուրդը ձևավորվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ փորձագետներից:

6. Խորհուրդը ձևավորվում է անդամության հրավերի հիման վրա ընտրված հայտատուներից: Պաշտպանը կարող է իր նախաձեռնությամբ ընդգրկել այլ շահագրգիռ անձի (անձանց) (վերջինիս համաձայնությամբ), եթե գտնում է, որ տվյալ անձի (անձանց) մասնակցությունը կարող է բարձրացնել Խորհրդի աշխատանքների արդյունավետությունը:

7. Խորհրդի անհատական կազմը հաստատվում է Պաշտպանի որոշմամբ:

8. Խորհուրդն ի պաշտոնե ղեկավարում է Պաշտպանը:

9. Խորհուրդը բաղկացած է ոչ պակաս, քան 5 անդամից:

10. Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն Խորհրդում կարող է ունենալ միայն մեկ ներկայացուցիչ:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. Խորհրդի անդամ կարող են լինել.

1) ըստ կանոնադրության և/կամ գործունեության շրջանակի՝ բացառապես կամ հիմնականում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցման և/կամ ուղղակիորեն հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող քաղաքականության և կանոնակարգման խնդիրների ոլորտում առնվազն 2 տարվա ոլորտային փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ,

2) առնվազն 2 տարվա ոլորտային փորձառություն ունեցող փորձագետներ, ովքեր մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքների իրականացմանը:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Խորհրդի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելն է՝ որպես խորհրդատվական մարմին:

13. Խորհրդի խնդիրներն են՝

1) աջակցել Պաշտպանին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության բարձրացմանը.

2) նպաստել հաշմանդամության ոլորտում մարդու իրավունքների վիճակի անընդհատ բարելավմանը, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ վերլուծությունների իրականացումը, համակարգային խնդիրների վերհանումը և դրանց հիման վրա Պաշտպանին առաջարկներ ներկայացնելը:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Խորհրդի անդամը կարող է իրականացնել սույն կարգով նախատեսված խնդիրներից բխող գործառույթներ:

15. Խորհրդի անդամը կամ Խորհրդի նիստերին մասնակցող անձը չի կարող՝

1) առանց Պաշտպանի համաձայնության հրապարակել Խորհրդում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկությունները.

2) Խորհրդի նիստերի ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները տրամադրել որևէ կազմակերպության կամ անձի, դրանք օգտագործել անձնական կամ այլ նպատակներով.

3) Խորհրդի անդամի կարգավիճակից բխող դիրքն օգտագործել Խորհրդի գործունեության շրջանակներից դուրս այլ գործողություններ իրականացնելու նպատակով.

4) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ սույն Կարգին հակասող գործողություններ:

16. Խորհրդի անդամն իրեն վերապահված գործառույթները կարող է իրականացնել միայն սույն Կարգով նախատեսված նպատակի և խնդիրների իրականացման համար:

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

